# ԿՈՎԿԱՍԻ ԱՊԱԳԱՆ ԿԱԽՎԱԾ Է ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ՝ ԳՐՈՒՄ Է «ՖԻԳԱՐՈ»

Ֆրանսիացի լրագրող Լոդիեն «Հակամարտություն՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ» վերտառությամբ եւ «Կովկաս. հիշողության շղթա» ենթավերնագրով ծավալուն հոդված է հրապարակել «Ֆիգարո» թերթի օգոստոսի 26-ի համարում: Ըստ թղթակցի, հիշողությունների շղթան Ղարաբաղի պատերազմն է, ավերներն ու զոհերը եւ 1915 թվականի ցեղասպանությունը, Սումգայիթի 1988 թվականի հայոց ջարդերը, որոնց մասին վաղուց արդեն չի խոսում օտար մամուլը: Այդ շղթայի մեջ նաեւ Խոջալուի դեպքերն են, որոնք լրագրողի կողմից դիտարկվում են որպես Ղարաբաղի պատերազմի ամենածանր ջարդը: Լրագրողը պնդում է, թե Երեւանն ընդունել է այդ ողբերգական սխալը:

Այցելելով Երեւան, Բաքու եւ Թբիլիսի, Լոդիեն օգոստոսի սկզբին ադրբեջանանպաստ մի թղթակցություն էր ստորագրել Բաքվից՝ նշելով հայկական լոբբիի ազդեցությամբ ԱՄՆ-ի Կոնգրեսում ընդունված որոշման հետեւանքով Ադրբեջանի կրած տառապանքները եւ անդրադառնալով Ալիեւի վերջին շրջանի արտաքին քաղաքականության հաջողություններին: Կովկասի ողջ շրջանի ապագան, ըստ նրա, կախում ունի Լեռնային Ղարաբաղից: «Ստալինի կողմից Ադրբեջանին նվիրված այդ շրջանը հանրապետություն է դարձել մեծամասնություն կազմող հայ բնակիչների անջատման հետեւանքով»,- գրում է Լոդիեն՝ նշելով, թե Լեւոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի կապը բացահայտել ու օրինականացրել է Հայաստանի վարչապետ նշանակելով Ռոբերտ Քոչարյանին, որը շարունակելով կառչած մնալ իր սկզբունքներին, այժմ ավելի մտահոգ է երկրի տնտեսական զարգացմամբ, այդ զարգացումը համարելով առաջնահերթ մի հարց: Հեղինակը մեջ է բերում նկարիչ Հակոբ Հակոբյանի խոսքերն այն մասին, թե Ղարաբաղը պատմական Հայաստանի մի մասն է:

Ֆրանսիացի լրագրողը նշում է նաեւ, որ Թուրքիան հրաժարվում է ճանաչել հայոց ցեղասպանությունը: Իր հոդվածը Լոդիեն սկսել է հենց ցեղասպանության ոգեկոչմամբ: «Հայաստանն իր ամենացավոտ հիշատակները պահել է Երեւանի մոտ գտնվող մի բլրի վրա»,- գրել է նա: Հիշեցնելով, որ Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Վաֆա Գուլիզադեն ասել է, թե Ադրբեջանի տարածքի 20%-ը հայերը գրավել են ռուսական զենքով, Լոդիեն եզրակացնում է, որ դա չի նպաստի Ղարաբաղի հարցի լուծմանը, քանի որ Ռուսաստանը եռանախագահության անդամներից մեկն է: Ուշագրավ է հոդվածի այն հատվածը, որտեղ ֆրանսիացի լրագրողը Ադրբեջանի արտգործնախարար Հասանովին հարցնում է, թե արդյո՞ք վերջինս հիշատակում է նահատակների ծառուղին Մոսկվայի հետ բանակցելիս: Հասանովն ուղղակի զինաթափող մի ցինիզմով պատասխանել է. «Ոչ միշտ, բայց երբ անհրաժեշտ է լինում, մտածում ենք այդ մասին»: